ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

մշակումը՝ Հովհ. Թումանյանի
(հատված)

Էս դարում Մսր անհաղթ ու հզոր
Մսրա Մելիքն էր նստած թագավոր,
Հենց որ իմացավ էլ Միեր չկա,
Վեր կացավ կռվով Սասունի վրա:
Ձենով Օհանը ահից սարսափած
Թշնամու առաջն ելավ գլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ ոտները,
- Դո՛ւ եղիր ասավ, մեր գլխի տերը,
Ու քու շվաքում քանի դեռ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք:
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցր աչքով մեզ մտիկ անես:
- Չէ՛, - ասավ Մելիք,- քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թրի տակով,
Որ էգուց - էլոր, ինչ էլ որ անեմ
Ոչ մի սասունցու թուր չառնի իմ դեմ:
Ու գնաց Օհան՝ բոլոր-բովանդակ,
Սասունը բերավ քաշեց սրի տակ,
Մենակ Դավիթը, ինչ արին- չարին
Մոտ չեկավ դուշման Մելիքի թրին:
Եկան քաշեցին, որ զոռով տանեն,
Թափ տվավ մարդկանց, գցեց դես ու դեն,
Փոքրիկ ճկույթը մի քարի առավ,
Ապառաժ քարից կրակ դուրս թռավ....

- Պետք է սպանեմ էս փոքրիկ ծուռին,-
Ասավ թագավորն իրեն մեծերին:
- Թագավո՛ր,- ասին, դու էսքան հզոր,
Թրիդ տակին է ողջ Սասունն էսօր,
Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնա:
- Դո՛ւք գիտեք,- ասավ Մսրա թագավոր,-
Բայց թե իմ գլխին փորձանք գա մի օր,
Էս օրը վկա,
Սրանից կգա:
....Էս որ պատահեց, մեր Դավիթ հսկան.
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան,
Մանուկ եմ ասել, բայց այնքան ուժեղ,
Որ նրա համար, թե մարդ, թե մժեղ...